ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «19» մարտի, 2018 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 13-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ԹԵՄԱՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ (ՄԻՆՉԵՎ 35 ՏԱՐԵԿԱՆ) ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2018 թվականի մարտի 17-ի N 239-Ա/2 հրամանը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթը (այսուհետ՝ մրցույթ) պատշաճ կազմակերպելու նպատակով՝

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ՝ Գ. Մելիքսեթյան)՝ քառօրյա ժամկետում ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը զանգվածային լրատվության միջոցներով և մրցույթի հրավերի փաթեթի տեղադրումը կոմիտեի ինտերնետային կայքում.

2) կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տ. Գալստյան)՝ ապահովել մրցույթի հայտարարության հրապարակման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սահմանված կարգով տրամադրումը.

3) կոմիտեի աշխատակազմի գիտական քաղաքականության վարչությանը (պետ՝ Ա. Սահարյան) և նույն վարչության գիտական քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնին (պետ՝ Կ. Ղարիբյան)՝

ա. մրցույթի հայտ ներկայացրած գիտաշխատողների համար իրականացնել տեղեկատվական խորհրդատվություն,

բ. ապահովել մրցույթին առցանց հայտ ներկայացնելու վերջնաժամկետի ավարտից հետո կոմիտե տպագիր տարբերակով ներկայացված հայտերի տեխնիկական ստուգման իրականացումը (10 աշխատանքային օր),

գ. մրցույթի արդյունքների ամփոփումից հետո մրցույթի մասնակիցներին 5 աշխատանքային օրերի ընթացքում տրամադրել տեղեկատվություն՝ մրցույթի արդյունքների վերաբերյալ,

դ. կազմակերպել մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ղեկավարների հետ հավելավճարի տրամադրման պայմանագրերի կնքումը:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ